

- Արարքի եւ կանոնի օգտապաշտութիւն,
- Առաւելութեան օգտապաշտութիւն եւ
- Ժխտական օգտապաշտութիւն:

1. Արարքի եւ կանոնի օգտապաշտութիւն

Բարոյագիտութեան ոլորտի մէջ, յաճախ կը զանազանուի «արարքի օգտապաշտութիւն»ը՝ «կանոնի օգտապաշտութեան»:

Արարքի օգտապաշտութիւնը (Act-Utilitarianism), որպէս սկզբունք կ'ընդունի նոյնիսկ արարքին կամ վարմունքին բերելիք առաւելագոյն օգուտը: Այստեղ պէտք է ընտրել ու կատարել այն վարմունքը, որմէ որպէս հետեւանք՝ առաւելագոյն օգուտ մը կ'ակնկալուի:

Կանոնի օգտապաշտութիւնը (Rule-Utilitarianism), ի տարբերութիւն Նախորդին, որպէս սկզբունք կ'ընդունի վարմունքի կանոնները: Այլ խօսքով, թէ այդ վարմունքը ի՞նչ կանոնի վրայ հիմնուած է: Այս տեսութեան համաձայն, առաջին հերթին պէտք է սերտել ու արժեւորել կանոններու բերելիք հետեւանքները եւ ընտրել առաւելագոյն օգուտ բերող կանոնը. ապա երկրորդ հերթին՝ նկատի կ'առնուի ընտրուած կանոնին վրայ հիմնուած վարմունքը:

Ուրեմն, *արարքի օգտապաշտութեան* պարագային, *ճիշդ* վարմունքը՝ առաւելագոյն օգուտ բերող վարմունքն է, իսկ *կանոնի օգտապաշտութեան* պարագային, *ճիշդ* վարմունքը այն է, որ հիմնուած է կանոնի մը վրայ, որ իր կարգին առաւելագոյն օգուտ բերողն է:

2. Առաւելութեան օգտապաշտութիւն

20-րդ դարու երկրորդ կիսուն, ժամանակակից բարոյագէտ-փիլիսոփայ **Ռ. Մ. Հարը** (Richard Mervyn Hare, 1919 – 2002) ամբողջ օգտապաշտութիւնը կը փոխադրէր՝ լեզուական-վերլուծական ոլորտ: Ան առանց դժուարութեան օգտապաշտութեան *օգուտի* գաղափարը կը մաքրէր զուտ հաճոյապաշտական տարրերէն, ինչպէս Նաեւ լեզուական որոշ փոփոխութիւններ կը կատարէր. օրինակ՝ փոխան «երջանկութեան» (անգլ.՝ Happyness, գերմ.՝ Glück) ու «հաճոյք»ի (անգլ.՝ Pleasure, գերմ.՝ Lust), ան կ'օգտագործէր՝ «*առաւելութիւն*» (անգլ.՝ Advantage, գերմ.՝ Vorteil), «շահ» (անգլ.՝ Benefit, գերմ.՝ Gewinn) կամ «լաւ» (անգլ.՝ Good, գերմ.՝ Gut) նուազ աչքառու եզրերը:

Հետագային, իրեն կը հետեւի՝ անտրալիացի ժամանակակից բարոյագէտ-փիլիսոփայ **Պ. Սինգեր** (Peter Singer, *1946), որ բարոյագիտական իր տեսութիւնը, 1979 թուականին, ամփոփած է՝ «*Գործնական բարոյագիտութիւն*» („Practical Ethics“) երկին մէջ: Աւելի ուշ, լոյս կը տեսնեն այս երկի ընդլայնուած հրատարակութիւնները (1993 թ. եւ 2011 թ.):

Նախընտրութեան օգտապաշտութիւն (Preference Utilitarianism) անունին տակ ծանօթ այս տարբերակը եւս կը շեշտէ անհատներու փափաքներու եւ հետաքրքրութիւններու ընտրութեան կարեւորութիւնը: Այլ խօսքով, որքան